Գնահատման բաժիններ	Անբավարար՝ 0-4 միավոր	Լավ՝ 5-8 միավոր	Գերազանց՝ 9-10 միավոր
Սցենարի համապատասխանելիությունը նպատակին՝ Երևանի գեղարվեստական ընկալմանը	Ներկայացվող սցենարը չի համապատասխանում խորագրին կամ միայն մասնակի է առնչվում Երևան քաղաքի հանրահռչակմանը: Ներկայացվող առաջարկը միտված չէ կամ միայն մասամբ է միտված Երևանի կերպարի գեղարվեստական ներկայացմանը:	Սցենարը որոշակիորեն կնպաստի Երևանի գեղարվեստական ներկայացմանը: Նախանշած նպատակների հետ կապը նկատվում է, սակայն առաջարկը որոշակիորեն հարմարեցված է խորագրին. ներկայացվող կապն ինչ-որ չափով արհեստական է:	Խորագրի համար նախատեսված առաջարկը լիովին համապատասխանում է Երևանի կերպարի հանրահռչակման նպատակին: Երևանը ներկայացվում է լավագույն լույսի ներքո և հետաքրքրություն առաջացնում քաղաքի նկատմամբ:

Հեղինակային լեզու և ոճ, դիտաշարի կառուցում, կերպարների ներկայացում	Հեղինակին չի հաջողվում ներկայացնել գաղափարը: Ստեղծագործության հղացման ու վերջնական արդյունքի հարաբերություն չկա կամ թերի է: Տեքստը աչքի է ընկնում պաթոսով, ճոռոմաբանությամբ, երկարաբանությամբ: Երկխոսությունները բավարար գեղարվեստականություն չունեն: Սցենարում ներկայված հարաբերությունները կեղծ են, հավատ չեն ներշնչում, անտրամաբանական շերտեր ունեն: Կերպարները հուզականություն չեն առաջացնում:	Տեքստը մասամբ է աչքի ընկնում գեղարվեստականությամբ: Հեղինակի ասելիքը մասամբ չի հասկացվում, նա ավելի շատ փորձում է պատմել, քան ցույց տալ: Գեղարվեստական տեքստը աչքի է ընկնում լեզվաոճական առանձնահատկություններով, սակայն որոշակի արհեստականություն է նկատվում, որով հեղինակը փորձում է շեշտել իր սեփական յուրահատկությունը: Կերպարները բնական են, արհեստական դրսևորումներ գրեթե չեն հանդիպում: Նրանց գործողությունները հիմնավորված են, գլխավորապես տրամաբանված: Կերպարները հուզականություն են առաջացնում, նրանց երկխոսությունները համապատասխանում են գեղարվեստական չափանիշներին:	Ասելիքը ներկայացված է վարպետորեն: Սցենարի գեղարվեստականությունը ներդաշնակում է հեղինակի լեզվաոճական ինքնատիպությանը: Ընտրված բառերը, նախադասությունները համատեքստի շրջանակներում են: Երկխոսությունները դիպուկ են և բնական: Սցենարում նկարագրվածն ամբողջապես բնական է, տրամաբանված է: Կերպարները հուզականություն են առաջացնում, դրդում ապրումակցման՝ ամբողջովին համապատասխանելով գեղարվեստական չափանիշներին:
Արդիականություն և նորարարական արժեք	Ներկայացված սցենարի բովանդակությունը ամենևին նոր չէ, թեման չարչրկված է: Սցենար իր հերթին աչքի չի ընկնում նորարարական բաղադրիչներով, ձևով և բովանդակությամբ կրնօրինակում է առկա սյուժեներին:	Գաղափարը ինչ-որ չափով նոր է, թեև նման մոտեցում արդեն կիրառվել է կինոինդուստրիայում: Հեղինակն ինչ-որ չափով կարողացել է սցենարը համեմել նորարարական բաղադրիչներով: Առաջադրվող խնդիրները բարձրաձայնում են քաղաքային, ազգային կամ համամարդկային նշանակություն ունեցող հարցեր:	Սցենարն արծարծում է համամարդկային արդիական խնդիրներ, ունի խոր բովանդակություն: Տեքստն աչքի է ընկնում նորարարականությամբ, որոշ գեղարվեստական լուծումներ համահունչ են արդի մոտեցումներին:

Սցենարը ներկայացված է պատշաճ տեսքով, պահպանված են հայտի լրացման կանոնները	Սցենարն ուղարկված է, սակայն այն չի պահպանում ժանրի կանոններին: Սինոփսիսը/լոգլայնը բացակայում են: Բուն սցենարն ավարտուն չէ: Հայտում առկա են մի շարք տեխնիկական և ուղղագրական սխալներ, անճշտություններ:	Սինոփսիսն ու լոգլայնը համապատասխանում են պահանջներին, սցենարը վերջնական տարբերակով չէ: Հայտում նկատվում են որոշ տեխնիկական և ուղղագրական սխալներ, անճշտություններ:	Սինոփսիսն ու լոգլայնը համապատասխանում են պահանջներին, ուղարկված է սցենարի ավարտուն տարբերակը: Հայտում անճշտություններ և տեխնիկական սխալներ չկան: